

**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ԵՎ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ
ՈՒ ԶԼՄ-ՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**
**Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի երրորդ եռամսյակային
զեկույց***
(հուլիս – սեպտեմբեր, 2010 թ.)

2010 թվականից Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն ներկայացնում է Հայաստանում խոսքի ազատության վիճակի մասին եռամսյակային միջանկյալ զեկույցներ, ընդգրկելով՝

1. Խոսքի եւ մամուլի ազատությանը վերաբերող օրենսդրությունն ու դրանում կատարվող փոփոխություններն ու գործընթացները,
2. Տնտեսական միջավայրն ու դրա ազդեցությունները ՁԼՄ-ների վրա,
3. Քաղաքական միջավայրն ու դրա ազդեցությունները ՁԼՄ-ների վրա,
4. Լրատվամիջոցների եւ լրագրողների իրավունքների խախտումները:

Առաջին եռամսյակային զեկույցը ներկայացվել է ս.թ. ապրիլի 8-ին, երկրորդը՝ հուլիսի 21-ին:

Սույն զեկույցն ընդգրկում է 2010 թվականի հուլիս - սեպտեմբեր ամիսները:

1. Խոսքի եւ մամուլի ազատությանը վերաբերող օրենսդրությունը

2010 թվականի երրորդ եռամսյակում ՁԼՄ ոլորտին վերաբերող օրենքներ կամ օրենքներում փոփոխություններ չեն ընդունվել:

Համաձայն «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը 2010 թ. հուլիսի 20-ին եւ 27-ին հայտարարեց ՀՀ տարածքում թվային հեռարձակման ցանցի միջոցով եթերային հեռարձակում իրականացնելու հեռուստահեռարձակողների լիցենզավորման մրցույթները: Մինչ այդ՝ հունիսի 27-ին ՀՌԱՀ-ը հաստատել էր այդ մրցույթի անցկացման կարգը: Ընդհանուր առմամբ հայտարարվել է 25 մրցույթ:

Սեպտեմբերի 18-ին ՀՀ նախագահի մամուլի քարտուղար Արմեն Արզումանյանը լրատվամիջոցներին տեղեկացրեց, որ հաշվի առնելով «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքի շուրջ ընթացող ակտիվ քննարկումները, ինչպես նաեւ քաղաքական գործիչների եւ հասարակական կազմակերպությունների հնչեցրած կարծիքները՝ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն առաջարկել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ղեկավարությամբ ստեղծել համապատասխան աշխատանքային խումբ՝ հեռուստատեսային հեռարձակման թվայնացման գործընթացի օրենսդրական կարգավորման աշխատանքներն ավարտին հասցնելու նպատակով: Ըստ Արմեն Արզումանյանի՝ կազմակերպությունների եւ անհատների ընդգրկմամբ ներկայացուցչական խումբը կնպաստի առկա խնդիրների առավել համակողմանի քննարկմանը: Սեպտեմբերի 28-ին հայտնի դարձավ, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը խնդրել է ՀՀ ԱԺ գիտության, կրթության,

* Չեկույցը պատրաստվել է Բաց հասարակության ինստիտուտի Օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի եւ Նիդեռլանդների Թագավորության կառավարության աջակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում:

մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արտակ Դավթյանին, ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մանուկ Վարդանյանին, Հայաստանի հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի նախագահ Գրիգոր Ամալյանին, Հանրային հեռուստատեսության տնօրեն Գագիկ Բունիաթյանին և Հանրային խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանին՝ առաջարկել իրենց կողմից ներկայացուցիչ: Մի շարք լրագրողական հասարակական կազմակերպություններ համաձայնություն են հայտնել ներգրավվել օմբուդսմանի ղեկավարությամբ ստեղծվող աշխատանքային խմբում: Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն որոշել է չմասնակցել այդ խմբի աշխատանքներին, քանի որ արդեն ունի իր աշխատանքային խումբը, որը անց է կացրել մի շարք քննարկումներ, կատարել է նախնական ուսումնասիրություններ եւ պատրաստում է իր առաջարկությունները, որոնք ներկայացվելու են նաեւ պետական իրավասու մարմիններին, այդ թվում եւ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին:

2. Տնտեսական պայմանները

ԶԼՄ-ների գործունեության վրա տնտեսական միջավայրի ազդեցությունը գնահատելիս հաշվի են առնվում, մասնավորապես, թե որքանո՞վ են լրատվամիջոցները պատկանում կամ վերահսկվում կառավարության կողմից եւ դա ազդո՞ւմ է, արդյոք, բազմակարծության վրա: Լրատվամիջոցների պատկանելությունը թափանցի՞կ է: Պետությունը կամ այլ սուբյեկտներ վերահսկո՞ւմ են լրատվամիջոցները գովազդի կամ դրամական օժանդակության միջոցով: Լրատվամիջոցների պատկանելությունը կենտրոնացվա՞ծ է, եւ ազդո՞ւմ է, արդյոք, դա բովանդակության բազմազանության վրա: Երկրի տնտեսական վիճակը սրո՞ւմ է լրատվամիջոցների կախվածությունը պետությունից, կուսակցություններից, մեծ բիզնեսներից կամ այլ ազդեցիկ քաղաքական սուբյեկտներից:

Հիշյալ եւ բաժնին վերաբերող մյուս հարցերի պատասխանները Կոմիտեն կներկայացնի իր տարեկան զեկույցում՝ օգոստոս-սեպտեմբերին անցկացված հետազոտության արդյունքներն ամփոփելուց հետո:

3. Քաղաքական միջավայրը եւ դրա ազդեցությունը

Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն նախորդ տարիների զեկույցներում նշել է, որ լրագրողների եւ լրատվամիջոցների իրավունքների խախտումներն ու նրանց նկատմամբ բռնություններն առավել ակտիվանում են քաղաքական իրավիճակի սրման պայմաններում: Եռամսյակն այս առումով հանգիստ էր:

Այսուհանդերձ, քաղաքական միջավայրի ազդեցության դրսեւորում կարելի է համարել նաեւ տարբեր քաղաքական ուժերի հանդեպ ԶԼՄ-ների խտրական վերաբերմունքը: ԽՍՀՄ-ն այս տարվա մայիս-սեպտեմբեր ամիսներին իրականացրել է մամուլի ակումբներում քաղաքական եւ հասարակական գործիչների մամուլի ասուլիսների՝ հեռուստատեսություն լուսաբանման դիտարկում: Նպատակն էր՝ պարզել, թե մայրաքաղաքային եւ համերկրային սփռում ունեցող հեռուստաընկերությունները ինչ հետաքրքրություն են դրսեւորում տարբեր քաղաքական հայացքներ ունեցող գործիչների ասուլիսների նկատմամբ, ըստ այդմ՝ որքանով են ապահովում հասարակական հնչողություն ունեցող այս կամ այն խնդրի վերաբերյալ տարբեր տեսակետների լուսաբանումը: Հարկ ենք համարում մեջբերել որոշ տվյալներ, որոնք ԶԼՄ-ների աշխատանքի վրա քաղաքական միջավայրի ազդեցության վառ օրինակներ են: Այսպես, ուսումնասիրված 68 մամուլի ասուլիսներից միայն մեկ դեպք է եղել, որ իշխանական

կոալիցիայի անդամ կուսակցության (ՕԵԿ) ներկայացուցիչի ասուլիսին ոչ մի ՀԸ ներկա չի եղել: Ընդդիմադիր քաղաքական գործիչների ասուլիսներին հեռուստաընկերությունների ներկա չլինելու 7 դեպք է արձանագրվել: ՀՀԿ ներկայացուցիչների մասնակցությամբ ասուլիսներին միջին հաշվով 7 հեռուստաընկերություն է ներկա եղել: Իսկ, օրինակ, ՀՅԴ-ի դեպքում այդ ցուցանիշը 5 է, «Ժառանգության» դեպքում՝ 3, ՀԱԿ-ի դեպքում՝ 2: ՀՀԿ-ի ներկայացուցիչների 2 ասուլիսների ժամանակ արձանագրվել է հեռուստաընկերությունների 100 տոկոս մասնակցություն (դիտարկված բոլոր 10 ՀԸ-ներն էլ ներկա են եղել), այն դեպքում՝ երբ, ասենք, հիմնական ընդդիմադիր ուժի՝ ՀԱԿ-ի ասուլիսներին ներկա լինելու առավելագույն թիվը 5-ն է:

Եվ մի օրինակ, թե ինչպես են հեռուստաընկերությունները նույն թեմայով, բայց տարբեր քաղաքական ուժերի ներկայացուցիչների ասուլիսները լուսաբանում: Հունիսի 18-ին Չայլու գյուղի մերձակայքում տեղի ունեցած զինված բախումը շարքավա թեմա էր դարձրել հայ-ադրբեջանական հարաբերություններն ու ԼՂՀ խնդրի հնարավոր զարգացումները: Հունիսի 22-ին «Փաստարկ» ակումբում լրագրողներին էր հանդիպել «Ժառանգություն» կուսակցության ներկայացուցիչ Ստեփան Սաֆարյանը: Ասուլիսին ներկա էր 5 հեռուստաընկերություն: Հունիսի 24-ին «Իրատես de facto» ակումբում նույն թեմայի շուրջ խոսում էր նախկին արտգործնախարար, ՀԱԿ ներկայացուցիչ Ալեքսանդր Արզումանյանը, նկարահանում էր եւ լուսաբանեց ընդամենը 1 հեռուստաընկերություն: Հունիսի 28-ին ՀԴԿ նախագահ Արամ Սարգսյանն էր «Ուրբաթ» ակումբում խոսում նույն թեմայով: Ներկա էր մեկ հեռուստաընկերություն, որը իր հիմնական լրատվական թողարկման մեջ այն չլուսաբանեց: Հունիսի 29-ին «Դե ֆակտո» ակումբում ԱԺ ՀՀԿ խմբակցության քարտուղար Էդուարդ Շարմազանովն էր: Ներկա էր եւ լուսաբանեց 10 հեռուստաընկերություն: Իսկ ահա նույն օրը՝ հունիսի 29-ին, «Հայացք» ակումբում ՀՀ ԱԺ «Ժառանգություն» խմբակցության պատգամավոր Ջարուհի Փոստանջյանի ասուլիսին ներկա էր ընդամենը 1 հեռուստաընկերություն:

Հիշյալ դիտարկման ամբողջական հաշվետվությունը կներկայացվի առաջիկայում:

4. Լրագրողների եւ լրատվամիջոցների իրավունքների խախտումներ

2010 թվականի երրորդ եռամսյակը, ի տարբերություն առաջին եւ երկրորդ եռամսյակների, իրավունքների խախտումների առումով, համեմատաբար հանգիստ էր:

2010 թվականի առաջին, երկրորդ եւ երրորդ եռամսյակների համեմատությունը՝ աղյուսակով

Խախտումների տեսակները / եռամսյակ	2010 1-ին եռամսյակ	2010 2-րդ եռամսյակ	2010 3-րդ եռամսյակ
Լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնություններ	5	3	0
ԶԼՄ-ների եւ դրանց աշխատակիցների վրա ճնշումներ	4	5	5
Տեղեկություններ ստանալու եւ տարածելու իրավունքի խախտումներ	6	5	3

Լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնություններ

2010 թվականի երրորդ եռամսյակում լրագրողների դեմ բռնության դեպք չի արձանագրվել, սակայն զարգացումներ են եղել նախկինում արձանագրված մեկ դեպքի կապակցությամբ:

Հուլիսի 27-ին ՀՀ ոստիկանության Կենտրոնականի քննչական բաժնի քննիչ Գարիկ Բեգոյանի որոշմամբ ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանի դեմ հարուցված սուտ մատնության վարույթը կարճվել է եւ նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել՝ «ՀՀ քրօրի 74 հոդվածով՝ իրադրության փոփոխության պատճառաբանությամբ»: Հիշեցնենք, որ ս. թ. փետրվարի 24-ի առավոտյան ՀՀ դատախազության շենքի առջեւ բռնարարք էր կատարվել «Առավոտ» եւ «Չորրորդ ինքնիշխանություն» թերթերի ֆոտոթղթակից Գագիկ Շամշյանի նկատմամբ: Լրագրողը լուսանկարում էր դատախազության կոլեգիայի նիստին մասնակցելու եկող դատախազներին և բարձրաստիճան պաշտոնյաներին: Սակայն մոտ 30-ամյա մի երիտասարդ արգելել էր Շամշյանին լուսանկարել, ապա հայհոյանքներ էր տեղացել նրա հասցեին ու հենց դատախազության շենքի մոտ հարվածել նրան: Գագիկ Շամշյանը վնասվածքներ էր ստացել, նրան ցուցաբերվել էր բժշկական օգնություն: Հետագայում պարզվել էր, որ բռնարարքի հեղինակը քննիչ Գագիկ Մարգարյանն է, որը գործուղմամբ աշխատում է ՀՀ հատուկ քննչական ծառայությունում: Ապրիլի 14-ին հայտնի դարձավ, որ ՀՀ ոստիկանության Կենտրոնի քննչական բաժնի քննիչ Գարիկ Բեգոյանը կարճել էր ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանի վրա հարձակված ոստիկանության քննիչ Գագիկ Մարգարյանի նկատմամբ քրեական հետապնդումը, ինչպես նաև սուտ մատնության մեղադրանքով քրեական հետապնդում էր սկսել Շամշյանի դեմ: Երբ Գագիկ Շամշյանը Կենտրոնի քննչական բաժնի քննիչ Գարիկ Բեգոյանից տեղեկացավ, որ իր դեմ քրեական գործ է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 333 հոդվածի («Սուտ մատնությունը») 2 մասի 2 կետի հատկանիշներով, դիմեց ՀՀ գլխավոր դատախազ Ադվան Հովսեփյանին՝ բողոքելով նախաքննության միտումնավորության, քրեական գործի վարույթն անհիմն կարճելու եւ իրեն մեղադրանք ներկայացնելու դեմ: Դրան հետևեց Երեւան քաղաքի դատախազի տեղակալ Ս. Խաչատրյանի պատասխանը, որում տեղեկացվում էր, թե նշված գործով ընդունված որոշումը «վերացնելու հիմքեր չկան»: Ֆոտոլրագրողը բողոք էր ներկայացրել Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան, որը մերժեց բողոքը:

ԶԼՄ-ների եւ դրանց աշխատակիցների վրա ճնշումներ

Հուլիսի 7-ին «Հայկական ժամանակ» օրաթերթը տեղեկացրեց իր լրագրող Սյուզաննա Պողոսյանի դեմ Երեւանի քաղաքապետ Գագիկ Բեգլարյանի ձեռնարկած ճնշման փորձի մասին: Ըստ թերթի՝ հուլիսի 6-ին քաղաքապետը բանագնացներ է ուղարկել Գեղարքունիքի մարզի Վարսեր գյուղ՝ լրագրողի հայրական տուն: Պատվիրակները տանը չգտնելով Սյուզաննա Պողոսյանի հորը՝ մոտավորապես ժամը 13-ից մինչև 21.30-ը սպասել են նրան: Երբ Պողոսյանի հայրը վերադարձել է տուն, նրանցից մեկն ինչ-որ տեղ է գանգահարել եւ բջջայինը փոխանցել նրան: Հեռախոսի մյուս ծայրից խոսողը ներկայացել է որպես Երեւանի փոխքաղաքապետ եւ Սյուզաննայի հորը հորդորել է ազդել դատեր վրա, որպեսզի վերջինս Երեւանի քաղաքապետին բարկացնող հրապարակումներով հանդես չգա:

Հուլիսի 9-ին Կենտրոն եւ Նորք-Մարաշ ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գագիկ Խանդանյանը բավարարեց Իջևանի քաղաքապետի հայցն ընդդեմ

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի: Դատարանը վճռեց՝ պարտավորեցնել «Հետաքննող լրագրողներին» «Ազգ» օրաթերթի և www.hetq.am կայքի միջոցով հերքել Ոսկան Սարգսյանի երկու հոդվածներում «հրապարակված անհիմն տեղեկությունները՝ Իջևանի քաղաքապետարանի գործարար համբավը և քաղաքապետ Վ. Ներսիսյանի պատիվը, արժանապատվությունն ու գործարար համբավն արատավորող փաստերը և հաստատել, որ դրանք իրականությանը չեն համապատասխանում»: Դատարանը վճռեց նաև՝ «Հետաքննող լրագրողներից» հոգուտ Իջևանի քաղաքապետարանի բռնագանձել 930 հազար դրամ՝ որպես փաստաբանական ծախս, ինչպես նաև 22 600 դրամ՝ որպես պետական տուրքի գումար: «Հետաքննող լրագրողների» ներկայացուցիչը նշեց, որ անպայման բողոքարկելու են դատարանի վճիռը վերադաս ատյանում:

Հիշեցնենք, որ այս գործով քննությունը սկսվել էր 2008 թվականի սեպտեմբերի 29-ին Երեւանի քաղաքացիական դատարանում: Հայցվորը պահանջում էր հերքել իրենց կարծիքով Իջևանի քաղաքապետ Վարուժան Ներսիսյանի պատիվը, արժանապատվությունը եւ գործարար համբավը արատավորող տեղեկությունները՝ հրապարակված «Հետքի» 2008 թվականի մայիսի 5-ի թողարկման «Ու՛մ գրպանն են մտնում ավագահանքի փողերը» (արտատպվել է նաև «Ազգ» օրաթերթի 2008 թ. մայիսի 20-ի համարի ներդիրում) եւ 2008 թվականի հունիսի 23-ի թողարկման «Երեք հանձնաժողովները «կտեսնեն» ջրամբարի ավազի անօրինական շահագործումը» հոդվածներում (մանրամասները տես՝ ԽԱՊԿ-ի 2008 եւ 2009 թվականների տարեկան զեկույցներում): Հետագայում, դատական բարեփոխումներից հետո, գործը տեղափոխվել էր Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան, որը 2009 թվականի հուլիսի 10-ի վճռով մերժել էր քաղաքապետարանի հայցը: Սակայն Իջևանի քաղաքապետարանը բողոք էր ներկայացրել վերադաս դատական ատյան, եւ 2009 թվականի նոյեմբերի 13-ին վերաքննիչ քաղաքացիական դատարանը բեկանեց Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վճիռը եւ գործը ուղարկեց լրացուցիչ քննության:

Ինչպես ԽԱՊԿ-ին տեղեկացրեց «Հետաքննող լրագրողներ» ՀԿ նախագահ Էդիկ Բաղդասարյանը, Կենտրոն եւ Նորք-Մարաշ ընդհանուր իրավասության դատարանի հուլիսի 9-ի որոշումն իրենք բողոքարկել են վերաքաննիչ դատարան:

Օգոստոսի 23-ին հայտնի դարձավ, որ «Հայք» օրաթերթի նախկին թղթակից, այժմ՝ «Ժամանակ» օրաթերթի եւ «Լրագիր» կայքի թղթակից Արման Գալոյանի դեմ հայց է ներկայացվել Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան՝ կապված ավելի քան երկու տարի առաջ՝ 2008 թ. փետրվարի 8-ին «Հայք» օրաթերթում հրապարակված «Սպանության հետքերով» հոդվածի հետ: Հայցը ներկայացրել է Արենի գյուղի բնակիչ Սուսաննա Բաղդասարյանը՝ նշելով, որ Արման Գալոյանը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19 հոդվածի պահանջները խախտելով, պղծել է իր որդու հիշատակը, արատավորել բարի համբավը, նրան ներկայացրել թմրամոլ: Բացի այդ, նա պահանջել է Արման Գալոյանի դեմ քրեական գործ հարուցել: Դատարանը նրա հայցը մասնակի է ընդունել վարույթ՝ հանգուցյալ որդու հիշատակը պղծող, բարի համբավն ու անունն արատավորող տեղեկությունները հերքելու պահանջի մասով: Արման Գալոյանը հոդված էր հրապարակել Արենի գյուղում կատարված սպանության վերաբերյալ: Սպանողը Սուսաննա Բաղդասարյանի ամուսինն էր՝ Համլետը, որը սպանության համար դատապարտվել է 10 տարվա ազատազրկման եւ ներկայումս իր պատիժն է կրում կալանավայրում: Գալոյանը հանդիպել էր սպանված Կարեն Մանուկյանի այրու հետ, եւ ներկայացրել նրա պատմածները, բողոքը, որում գնահատականներ կան նաև հայցվորի հանգուցյալ որդու մասին: Հոդվածից մոտ 1 տարի անց Սուսաննա Բաղդասարյանի սկեսրայրը դիմել էր ՀՀ դատախազություն՝ Գալոյանի դեմ քրեական գործ հարուցելու պահանջով: Այդ դիմումն ուղարկվել էր ոստիկանության քննչական գլխավոր վարչության

Կենտրոնի բաժին: Այստեղ կողմերից բացատրություններ վերցնելուց հետո որոշում էր կայացվել հանցակազմի բացակայության պատճառով քրեական գործի հարուցումը մերժել: Եվ այժմ Մուսաննա Բաղդասարյանն է հայց ներկայացրել Արման Գալոյանի եւ «Հայք» օրաթերթի դեմ: Առաջին դատական նիստը նշանակված է հոկտեմբերի 26-ին:

Սեպտեմբերի 14-ին լրագրողի աշխատանքին խոչընդոտելու հերթական փորձն է արձանագրվել ՀՀ Ազգային ժողովում: Երբ «Հայական ժամանակի» թղթակից Լուսինե Բարսեղյանը ԱԺ բուֆետում փորձել է լուսանկարել պատգամավորներին, նրանցի մեկը՝ Մաշիկ Մարգարյանը (նախագահ Սերժ Մարգարյանի եղբայրը) տեղից վեր է ցատկել եւ գորգոռալով հարձակվել լրագրողի վրա: Նրան հանգստացրել են ներկա մյուս պատգամավորները:

Սեպտեմբերի 16-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում տեղի ունեցավ «Երեւանի հումանիտար ինստիտուտի ռեկտորն ընդդեմ «Հետք» շաբաթաթերթի» գործով առաջին՝ նախնական դատական նիստը: Այդ մասնավոր բուհի ռեկտոր Միքայել Ամիրխանյանը «Հետքից» եւ լրագրող Անի Հովհաննիսյանից պահանջում էր հերքել շաբաթաթերթում տպագրված «Այո՛, ես բիզնես եմ անում», -ասում է ռեկտորը» հոդվածը (N 21, 03.06.2010), որն, ըստ հայցի, արատավորել է ռեկտորի պատիվն ու արժանապատվությունը եւ գործարար համբավը: Միքայել Ամիրխանյանը պահանջում էր նաեւ հոգուտ իրեն բռնագանձել 200 հազար դրամ՝ փաստաբանական ծառայությունների դիմաց, ինչպես նաեւ 8.000 դրամ նախապես վճարված պետական տուրքը:

Լրագրող Անի Հովհաննիսյանի շահերն այդ դատավարության ընթացքում ներկայացնում էր փաստաբան, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի իրավաբան Օլգա Սաֆարյանը: Առաջին նիստում երկու կողմերի ներկայացուցիչները հանդես եկան միջնորդություններով եւ լրացուցիչ նյութերով: Մասնավորապես՝ պատասխանող կողմը միջնորդեց, որպեսզի ռեկտոր Միքայել Ամիրխանյանը դատարան ներկայացնի ՀՀ կրթության եւ գիտության նախարարության կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման հանձնաժողովի ստուգումների արդյունքների ակտը, կնքված պայմանագրերը՝ «Սագամար» ընկերության, Երեւանի կինոյի եւ թատրոնի պետական ինստիտուտի հետ, ինչպես նաեւ՝ անշարժ գույքի օգտագործման իրավունքի գրանցման վկայականը: Դատարանն իր հերթին հայցվոր կողմից պահանջեց Ամիրխանյանի եւ նրա ուսանողուհի՝ Գայանե Մալիշենկոյի միջեւ կնքված աշխատանքային պայմանագիրը, քանի որ դատարան ներկայացրած պայմանագիրն անստորագիր էր: Դատական հաջորդ նիստում՝ հոկտեմբերի 1-ին, հայցվորը հրաժարվեց իր հայցից: Դատարանն իր վճիռը կհրապարակի հոկտեմբերի 14-ին:

Տեղեկություններ ստանալու եւ տարածելու իրավունքի խախտումներ

Հուլիսի 29-ին հրդեհ էր բռնկվել Կենդանաբանական այգուն հարակից տարածքում: Ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, կատարելով իր մասնագիտական պարտքը, լուսանկարել է դեպքի վայրը: Այդ ժամանակ «Արքայաձոր» ռեստորանից դուրս են եկել մի քանի անձինք ու փորձել խոչընդոտել լրագրողի աշխատանքը՝ կոպիտ արտահայտություններ անելով: Ինչպես ԽԱՊԿ-ին տեղեկացրեց Գագիկ Շամշյանը, փաստի մասին ինքը ահազանգել է 1-01, սակայն որեւէ արձագանք ուստիկանությունից չի ստացել:

Սեպտեմբերի 7-ին Շիրակի մարզի Արթիկ քաղաքում նոր մշակույթի տան բացման արարողության ժամանակ ՀՀ վարչապետ Տիգրան Մարգարյանին ուղեկցող խմբի անդամները խոչընդոտել են «ԳԱԼԱ» հեռուստաընկերության նկարահանող խմբի, մասնավորապես՝

լրագրող Քրիստինա Մկրտչյանի աշխատանքը, կոտրել միկրոֆոնն ու հենակալը՝ պատճառելով բարոյական ու նյութական վնաս: Ըստ «ԳԱԼԱ» ՀՀ-ի տարածած հաղորդագրության՝ ի սկզբանե «ԳԱԼԱ» հեռուստաընկերության աշխատակիցների նկատմամբ ցուցաբերվել է ուղղորդված բացասական վերաբերմունք, սահմանափակվել է լրագրողի եւ օպերատորի տեղաշարժը: Այսուհանդերձ, ըստ նույն հաղորդագրության, վարչապետի մամլո պատասխանատուն լրագրողից բանավոր ներողություն է խնդրել՝ ասելով, որ տեղի ունեցածը պատահականություն է: Նույն օրը ՀՀ վարչապետի օգնական Արամ Անանյանը տվել է միջադեպի մասին իր պարզաբանումները: Նա նշել է, որ իրականությանը չի համապատասխանում այն, որ Տիգրան Սարգսյանին ուղեկցող խմբի անդամները խոչընդոտել են «ԳԱԼԱ» հեռուստաընկերության նկարահանող խմբի աշխատանքը: Ըստ նրա՝ միկրոֆոնն ու հենակալը կոտրվել են վարչապետի թիկնազորի ծառայության աշխատակիցներից մեկի «պատահական հպումից՝ անզգույշ թեքվելու հետեւանքով»: Արամ Անանյանը ասել է, որ «ԳԱԼԱ»-ի կրած նյութական վնասը կհատուցվի:

Սեպտեմբերի 29-ին ՀՀ վարչական դատարանում ավարտվեց ընդդեմ Հատուկ քննչական ծառայության Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի հայցի քննությունը: 2010 թ. մարտի 17-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն, դիմել էր ՀՀ հատուկ քննչական ծառայություն՝ խնդրելով տրամադրել 2009 թ. հունվարի 1-ից մինչև 2010 թ. մարտի 17-ն ընկած ժամանակահատվածում քրեական գործ հարուցելու, քրեական գործի հարուցումը մերժելու, քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական գործը կարճելու մասին որոշումների պատճենները: ՀՀ հատուկ քննչական ծառայությունը 2010 թ. մարտի 25-ին պատասխան գրությամբ մերժել էր կազմակերպությանը տրամադրել պահանջված տեղեկատվությունը՝ պատճառաբանելով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կազմակերպությունը նշված տեղեկատվությունը ստանալու համար պատշաճ է իրավասու անձ չի հանդիսանում: Կազմակերպությունը 2010 թ. ապրիլի 9-ին հայցադիմում էր ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ ՀՀ հատուկ քննչական ծառայությանը տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին: Պատասխանող կողմը դատական ոչ մի նիստի չի մասնակցել: Դատարանը վճիռը կիրառարակի հոկտեմբերի 19-ին:

Ձեկույցը պատրաստվել է Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի տվյալների, ինչպես նաև մամուլի հրապարակումների հիման վրա: